ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

«ԵՐԵՎԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 29 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

2023-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐ

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ՝
ՀԱՅԿԱՆՈՒՇ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2023

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

1. Դպրոցում հանրակրթության կազմակերպման սկզբունքները եվ մոտեցումները 4

2. Ընդհանուր տեղեկություններ դպրոցի մասին 5

3. Դպրոցի առաքելությունը 8

4. Իրավիճակի նկարագրություն 10

5. Դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները 22

6. Դպրոցի զարգացման նախընտրելի ուղղությունները 27

7. Մանկավարժական համակազմի որակական բարելավումը 28

8. Սովորողների կարողությունների և հմտությունների զարգացումը 30

9. Դպրոցի զարգացման ծրագրի հիմնական նպատակներ և խնդիրները, կատարողներն ու ժամանակացույցը 31

10. Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունը 40

11. Զարգացման ծրագրի հնարավոր ռիսկերը և դրանց նվազեցմանն ուղղված գործողությունները 41

Եզրափակում 43

ՆԱԽԱԲԱՆ

Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք:

/ՀՀ Սահմանադրություն, հոդված 39/

Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

«Երևանի Ա. Մարգարյանի անվան հ.29 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման 2023-2028թթ. ծրագիրը մշակվել է ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2016-2025թթ. պետական ծրագրին» համապատասխան՝ հաշվի առնելով կրթական հաստատության ներուժը և առանձնահատկությունները, մանկավարժական համակազմի ձեռքբերումները և դպրոցում առկա խնդիրները:

1. ԴՊՐՈՑՈՒՄ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է հանրակրթության բնագավառի զարգացումը՝ որպես անհատի և հասարակության անվտանգության և կայուն զարգացման ապահովման, հայ ինքնության պահպանման կարևոր երաշխիք:

Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթը:

Միջնակարգ կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է 12-ամյա միջնակարգ կրթություն:

Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է:

Հայաստանի Հանրապետությունում հանրակրթությունն իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հանրակրթությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր սովորողի՝

1) մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը.
2) մարդկային արժանապատվության պահպանմանը.
3) իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը.
4) ինքնասպասարկման ունակությունների ձեռք բերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը.
5) մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստմանը.
6) ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովմանը.
7) որպես ապագա քաղաքացու ձևավորմանը:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ՀԱՄԱՐԸ՝
ԵՐԵՎԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 29 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝ *Ք.ԵՐԵՎԱՆ, ՄԱՐՅԱՆ 23*
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՌԱԳՐՈՍԱՀԱՄԱՐԸ՝ *+374 10 58 32 70*
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ՝ *YEREVANSCHOOL29@MAIL.RU*
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԻ ՀԱՍՑԵՆ՝
HTTP://HIGHSCHOOL29.AM/

2.1 ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄ

Մ. Արազու անվան դպրոցը հիմնադրվել է 1934թ.: 1939թ. շենքի երրորդ հարկը զբաղեցրել է Չկալովի անվան թիվ 30 դպրոցը, որի համար 1974 թվականին 29 դպրոցին կից կառուցվեց նոր մասնաշենք:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին դպրոցի առաջին հարկը ծառայում էր որպես հոսպիտալ, իսկ ուսուցիչներն ու աշակերտները խնամում, օգնություն էին ցուցաբերում հիվանդներին, շրջանավարտներից շատերը կամավոր մեկնում էին ռազմաճակատ: Պատերազմի առաջին իսկ օրերին ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ Գրիգոր Կարպի Սամվելյանը 9-10-րդ դասարանների աշակերտների հետ մեկնեց ռազմաճակատ: Նա հասավ մինչև Բեռլին և Ռեյխստագի պատերի տակ պարեց հայկական նշանավոր «Քոչարին:

1945թ. երկար սպասված հաղթանակից հետո դպրոցը մեծ վերելք է ապրում: Միայն 1950թ. տասներորդ դասարանի 24 աշակերտներից 12-ը մեդալակիրներ էին: Նրանց մեջ էր ապագա ակադեմիկոս Պարիս Հերունին:

2.2 ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

1991թ. թիվ 29 դպրոցում բացվեցին ռուսաց լեզվի ուսուցմամբ դասարաններ:

2.3 ԴՊՐՈՑԻ ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒՄ

2010թ. ՀՀ կառավարությունը Երևանի թիվ 29 միջնակարգ հանրակրթական դպրոցն անվանակոչել է վաղամեռիկ վարչապետ, պետական գործիչ Անդրանիկ Մարգարյանի անունով:

2011թ. սկսվեց դպրոցի հիմնանորոգումը:

2.4 ՉԻՆԱՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ

2014թ. սեպտեմբերի 1-ից Ա. Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոցում հայտարարվում է չինարենի ուսուցման դասարանում սովորել ցանկացողների ցուցակագրումը: Իսկ 2015թ. չինարենը դառնում է դասավանդվող երրորդ օտար լեզու:

3. ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է.«Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանի զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է»:

Դպրոցի առաքելությունը պետք է բավարարի սովորողի կրթական կարիքները՝ սահմանելով կրթական որակի բարձրացման և ազգային դպրոցի գլխավոր նպատակի իրագործման ուղիները:

Ուստի դպրոցի ամբողջ գործունեությունը պետք է նպատակաուղղված լինի հայրենասեր, բանիմաց, բազմակողմանի զարգացած, նպատակասլաց, հայրենիքին անձնուրաց ծառայելու պատրաստ, հանդուրժող և բարի, հոգևոր բարձր արժեքների դավանող, մշտապես կատարելագործման ձգտող, ներդաշնակ զարգացած, մրցունակ անհատի, քաղաքացու ձևավորմանը:

Այս առաքելության իրականացման ճանապարհին որպես ելակետ ընդունում ենք զարգացման սույն ծրագիրը, որը ենթադրում է աստիճանական իրականացում՝

- Պարտուսահասակ աշակերտների ուսման և դաստիարակության ամենօրյա ուշադրության ապահովում:
- Ռազմահայրենասիրական և ֆիզիկական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքների ապահովում:
- Ուսուցիչների ինքնակրթության և դասավանդման մեթոդների ստեղծագործական մակարդակի բարձրացում:
- Գիտելիքների որակական նոր ցուցանիշների աստիճանական ակնկալում:
- Ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետ կառավարում:

Մեր օրերում և՛ հասարակական գիտակցության, և՛ պետական քաղաքականության մեջ կրթությունը, հատկապես՝ որակյալ կրթությունը շարունակում է մնալ գերակայությունների շարքում՝ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գրավական:

Դպրոցի առաքելության իրականացման համար կարևորում ենք հետևյալ խնդիրները.

1.Դպրոցը պետք է ապահովի որակյալ հիմնական կրթություն:

2. Դպրոցը պետք է ապահովի կրթական բարենպաստ և ապահով միջավայր ազգային, համամարդկային բարոյական արժեքների վրա հիմնված կրթություն և դաստիարակություն ստանալու համար:

3. Դպրոցը պետք է բացահայտի երեխայի ունակությունները, տաղանդը և ապահովի նրա անընդհատ զարգացումը:

4. Դպրոցում աշակերտը պետք է սովորի սովորել և դպրոցում գտնի դրա բանալին

5. Դպրոցը պետք է ապահովի աշակերտների մտավոր զարգացման պայմանները:

6. Դպրոցում պետք է կատարվի կազմակերպված թիմային աշխատանք՝ պլանավորում-կատարում-ստուգում-վերլուծություն սկզբունքով:

7. Դպրոցը պետք է ստեղծի մեխանիզմներ կրթության որակի արդյունավետ կառավարման համար:

8. Դպրոցը պետք է ունենա իրենց գործին նվիրված համախոհների ուժեղ և միասնական թիմ, լավատես ու հայրենասեր որակյալ մասնագետներ:

4. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի առկա իրավիճակի վերլուծությունը շատ կարևոր է դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար:

Այս առումով՝ որպես հիմք, ընդունել ենք դպրոցի գործունեության ներքին գնահատման վերջին 3 ուսումնական տարիների հաշվետվությունների արդյունքները:

4.1 ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

Ուսումնական հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար:

Դպրոցի տարածքը մաքուր է: Աղբահանությունը կատարվում է Երևանի քաղաքապետարանի համապատասխան վարչության հսկողությամբ: Դպրոցի ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ միջատների, կրծողների / ախտահանման, կանխարգելման/ դեմ:

Դպրոցը հիմնովին վերանորոգված է:

Դպրոցն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների մանուալ ազդարարման համակարգով:

Դպրոցի շենքը հարմարեցված չէ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժ և ուսուցում ապահովող պայմաններին /թեք հարթակները բացակայում են/:

Դպրոցն ապահովված է հակահրդեհային անվտանգության լրակազմով:

Դպրոցի կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին և բարվոք վիճակում է:

4.2 ԴՊՐՈՑԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ: Նախահաշիվը և հաշվետվությունները տեղադրվում են դպրոցի կայքում:

Դպրոցի ֆինանսավորումը կատարվում է ՀՀ պետական բյուջեից: Գումարը պայմանավորված է աշակերտների թվով:

Բյուջեի ծախսերի հիմնական ուղղություններն են՝

- Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ /ներառյալ եկամտահարկը/
- Կոմունալ վճարներ
- Գրասենյակային և տնտեսական ապրանքներ
- Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր
- Կապիտալ ծախսեր
- Այլ ծախսեր

ՀՀ պետական բյուջեից ստացվող միջոցների մեծ մասը բաժին է ընկնում աշխատավարձերի և համապատասխան հարկերի վճարմանը, ապա կոմունալ ծախսերին:

Դպրոցը հոգում է էլեկտրաէներգիայի, ջրի, գազի խնայողության մասին:

4.3 ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

Դպրոցի գործունեությունը կանոնակարգվում է հետևյալ իրավական ակտերով «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», « Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներով « ՀՀ աշխատանքային օրենսգրքով», դպրոցի կանոնադրությամբ , օրինակելի իրավական ակտերի տեղայնացված տարբերակներով,ներքին իրավական ակտերով, նորմատիվ փաստաթղթերով: Դպրոցին վերաբերող բոլոր իրավանորմատիվային փաստաթղթերի վարումը իրականացվում է սամանված կարգով:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 08.09.2020թ. «Հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածվող փաստաթղթերի ցանկը» N 28-Ն հրամանով հաստատված հավելվածում ներառված փաստաթղթերն են՝

1) Էլեկտրոնային դասամատյաններ
2) Աշխատողի անձնական էլեկտրոնային գործ
3) Սովորողի անձնական էլեկտրոնային գործ
4) Միջնակարգ կրթության ատեստատների բաշխման մատյան
5) Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան
6) Ավարտական, պետական ավարտական, փոխադրական, էքստեռն քննությունների և գիտելիքների ստուգման արձանագրություններ
7) Էլեկտրոնային հաստիքացուցակ
8) Տարիֆիկացիոն մատյան
9) Դպրոցի մանկավարժական խորհրդի նիստերի արձանագրություններ
10) Ուսուցիչների բաց թողած և փոխարինված դասաժամերի հաշվառման մատյան
11) Ուսումնական առարկաների թեմատիկ պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով

4. 4 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

«Հայաստանի Հանրապետության պետանան հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 29-րդ կետի համաձայն՝ հաստատության կառավարումն իրականացնում է հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը տնօրենը, որը պաշտոնի է նշանակվում և պաշտոնից ազատվում օրենքով սահմանված կարգով:

Հաստատությունում, ըստ ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 23-ի N444 որոշման, իրականացվում է կոլեգիալ կառավարում:

Կոլեգիալ կառավարումն իրականացնող մարմինը հաստատության խորհուրդն է: «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրության 77-րդ կետով ամրագրված է. «Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական, հոգաբարձուների խորհուրդներ: Հանրակրթական դպրոցում կարող են ձևավորվել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ մարմիններ»



Խորհրդակցական բոլոր մարմիններն ունեն իրենց կանոնադրությունը, որը կազմում է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը: Կանոնադրությամբ սահմանվում են տվյալ մարմնի գործունեության ոլորտները և կարգը:

Ա.Մարգարյանի անվան հ. 29 ավագ դպրոցում *կառավարման խորհրդի* անդամները կառավարչական իրավական գործառույթներ ունեն, որոնք նպաստում են դպրոցի արդյունավետ գործունեությանը, ապահովում համագործակցություն

համայնքի հետ, քննարկում ֆինանսական և տարիֆիկացիոն հարցեր, ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները:

Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է համակազմի օգոստոսյան առաջին նիստին: Մանկխորհուրդը սովորաբար գումարվում է հիմնականում բոլոր անդամների մասնակցությամբ, քննարկում ընթացիկ հարցեր: Նիստերը արձանագրվում են սահմանված կարգով:

Դպրոցի աշակերտական խորհուրդը ակտիվ է և գործում է ժողովրդավարական սկզբունքներով: Աշակերտական խորհուրդը հանդես է գալիս մի շարք առաջարկություններով, նախաձեռնում և կազմակերպում թեմատիկ միջոցառումներ, նպաստում ներքին կարգապահական կանոնների պահպանմանը:

Աշակերտական խորհրդի հետագա ավելի ակտիվ գործունեության համար անչափ կարևորում ենք նրանց կողմից բարձրացվող հարցերի մանրամասն ուսումնասիրություն և մասնագիտական վերլուծություն կազմակերպելով տարատեսակ քննարկումներ:

Դպրոցում աշակերտների կրթության և դաստիարակության գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու համար անչափ կարևոր է դպրոցի *ծնողական խորհրդի* ճիշտ և հետևողական աշխատանքը: Ծնողը ուսուցչի առաջին և կարևորագույն գործընկերն է: Դպրոցի ծնողական խորհուրդը սերտ համագործակցում է ինչպես դպրոցի տնօրենության, այնպես է մանկավարժական և աշակերտական խորհուրդների հետ՝ մշտապես աջակցելով ուսումնադաստիարակչական և կազմակերպչական տարբեր հարցերում:

Կարևորելով դպրոցի խորհրդակցական մարմինների միասնական և փոխկապակցված գործունեությունը ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման հարցում՝ որպես դպրոցի տնօրեն՝ պետք է կարողանալ ժամանակին և ճիշտ գնահատել նրանց աշխատանքը և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել խորհրդակցական մարմինների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Այդ նպատակով կազմակերպել տարատեսակ քննարկումներ և սեմինարներ:

4.5 ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

2022-2023 ուստարվա սկզբին դպրոցում սովորում է 602 աշակերտ: Դպրոցն ունի բարձր վարկանիշ, այստեղ սովորել ցանկացողների թիվը ավելանում է յուրաքանչյուր տարի: Ծնողները կարևորում են դպրոցի բարձր համբավը, կարգապահությունը, օտար լեզուների խորացված ուսուցումը, գնահատում խստապահանջությունն ու կրթության և դաստիարակության միասնականությունը, որակը, ուսումնական ջերմ և ապահով միջավայրը:

Հատուկ ուշադրություն է դարձվում շնորհալի և ստեղծագործող աշակերտներին, նրանց հաջողություններին և՛ դպրոցում, և՛ դպրոցից դուրս:

Դպրոցի աշակերտները հաջողությամբ մասնակցում և մրցանակային տեղեր են զբաղեցնում առարկայական օլիմպիադաներում և տարբեր մրցույթներում:

Առաջիկայում նախատեսում ենք դպրոցի կայքում ստեղծել հատուկ բաժին՝ շնորհալի սովորողների և նրանց հաջողությունների մասին պատշաճ տեղեկատվության համար:

4.6 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԸ

Դպրոցի բոլոր ուսուցիչները իրենց գործի իսկական նվիրյալներն են՝ համապատասխան մասնագիտական կրթությամբ, պարտաճանաչ և պատասխանատու:

Դպրոցում աշխատում են տարակարգ ունեցող երկու ուսուցիչ:

Դպրոցում գործում են հայոց լեզվի և գրականության, պատմության, ռուսաց լեզվի, անգլերենի, բնագիտության և մաթեմատիկայի մեթոդմիավորումները:

Մեթոդմիավորումների գործունեության նպատակը կրթական գործընթացի, մեթոդական ուսուցման կազմակերպումն է, դասավանդման վիճակի, աշակերտների գիտելիքների որակի, նրանց զարգացման մակարդակի ուսումնասիրությունը, մեթոդական աշխատանքի վերլուծությունը և այլն:

Մեթոդմիավորումներն ապահովում են առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան ուսումնական ծրագրերի կատարումը:

Պարբերաբար գումարվում են նիստեր, որոնք արձանագրվում են համապատասխան ձևով: Մեթոդմիավորումների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է հետևողական մոտեցում: Այդ նպատակով անհրաժեշտ է

1.Առարկայական մեթոդական միավորումների նախագահների համար կազմակերպել սեմինարներ՝ «Առարկայական մեթոդական միավորման աշխատանքների պլանավորումը և կազմակերպումը» թեմայով:

2.Զարգացնել առարկայական մեթոդական աշխատանքի կազմակերպման զինանոցը՝ գործող փորձի ուսումնասիրության միջոցով:

4.7 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ և ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Աշակերտները ակտիվ մասնակցում են համայնքային կյանքին, աջակցում համայնքի կազմակերպված միջոցառումների անցկացմանը:

Դպրոցում կազմակերպվող բազմաթիվ ու բազմաբովանդակ միջոցառումներին ներկա են լինում մեծաթիվ ծնողներ, որոնք համայնքի բնակիչներ են:

Դպրոցն ակտիվ համագործակցում է կրթամշակութային մի շարք կազմակերպությունների՝ Մոսկվայի տան «Россотрудничество», «Дом русской книги», «Տաթև» գիտակրթական համալիրի և «Զանգակ» գրատան հետ:

4.8 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ուսումնական միջավայրը հատուկ կազմակերպված հնարավորությունների, գործընթացների և սոցիալական փոխազդեցության համակարգ է, որը տրամադրում է սովորողին ուսուցման և զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսները:

Ուսումնական միջավայրի ճիշտ վերլուծությունը զարգացման ծրագրի կարևոր գործոններից է: Այն դպրոցում սովորեցնելու և սովորելու ավանդույթի, դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունն է:

Կրթական արդի միջավայրը միավորում է կրթության համակարգի բոլոր տարրերը և ցույց տալիս ուսումնական գործընթացի տարբեր մեխանիզմներ և գործիքներ:

Դպրոցն ունի համակարգչային տեխնիկայով հագեցած դասարան: Առաջիկայում նախատեսում ենք հնարավորության սահմաններում դասարանները համալրել էլեկտրոնային գրատախտակներով:

Դպրոցն ունի գեղեցիկ հանդիսությունների դահլիճ, ընդարձակ մարզադահլիճ, գրադարան՝ հայերենով և այլ լեզուներով մեծաքանակ գեղարվեստական գրականությամբ: 2023-2028թթ. նախատեսում ենք այն համալրել ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ գրականությամբ, էլեկտրոնային գրքերով, ունենալ հարմարավետ ընթերցասրահ՝ սովորողների շրջանում ընթերցանության հանդեպ հետաքրքրությունը խթանելու նպատակով:

Կրթական և ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության, ինչպես նաև սովորողների շրջանում հետաքրքրության բարձրացման նպատակով նախատեսում ենք կազմակերպել բազմաբովանդակ հանդիպումներ գիտության,

արվեստի, սպորտի և այլ ոլորտների ներկայացուցիչների, աշակերտների, ինչու չէ նաև ծնողների, մանկավարժների շրջանում, անցկացնել բաց դասեր, կլոր սեղաններ, սեմինարներ:

Դպրոցն ունի նախնական զինվորական պատրաստության կաբինետ, կենսաբանության, քիմիայի և ֆիզիկայի լաբորատորիաներ՝ անհրաժեշտ սարքավորումներով, նյութերով, զննական պարագաներով: Լաբորատորիաները չունեն վերանորոգման կարիք:

Առաջիկայում նախատեսում ենք և՛ սարքավորումների և՛ անհրաժեշտ նյութերի և պարագաների հավելում՝ աշակերտների շրջանում բնագիտական առարկաների նկատմամբ հետաքրքրությունը բարձրացնելու նպատակով:

Կարևորագույն հարցերից մեկը դպրոցում պետք է լինի երեխաների առողջության պահպանումը: Այս նպատակով կարևորում ենք սովորողների շրջանում պարբերաբար կազմակերպել տարատեսակ միջոցառումներ, հանդիպումներ, դասախոսություններ անառողջ սովորությունների վնասակարության թեմայով:

Դպրոցում առկա է բուժսենյակ՝ անհրաժեշտ դեղորայքով:

Աշակերտների բացակայությունները պետք է խստորեն վերահսկվեն, ճշտվեն պատճառները, բացառվեն անհարկի բացակայությունները:

Անհրաժեշտության դեպքում Առողջապահության նախարարության համապատասխան հրամանի համաձայն՝ դասարանները օպերատիվ կերպով անցնում են առցանց ուսուցման՝ իրենց դասացուցակով:

Դպրոցում խստորեն պահպանվում են սանիտարահիգիենիկ պահանջները, կատարվում է ամենօրյա ախտահանում:

Դպրոցում պետք է տարվի ամենօրյա հետևողական աշխատանք՝ բոլորի համար հաճելի մթնոլորտ ստեղծելու բարդ գործը իրականացնելու համար: Աշակերտները պետք է սովորեն միմյանց հետ ճիշտ շփվելու մշակույթ, իսկ դա պետք է անել սեփական օրինակը ցույց տալով: Դպրոցի տնօրենի կարևորագույն խնդիրներից մեկը բարոյահոգեբանական ճիշտ մթնոլորտի ձևավորումն ու պահպանումն է թե՛ մանկավարժների, թե՛ ուսումնական հաստատության մյուս աշխատակիցների շրջանակում:

Երեխաները և նրանց ծնողները պետք է համոզված լինեն, որ դպրոցում երեխաները ապահով են, պաշտպանված, մշտապես ուշադրության կենտրոնում:

Ճիշտ կրթական միջավայրի ապահովման գլխավոր գրավականներից մեկը բարոյահոգեբանական ջերմ մթնոլորտի ապահովումն է:

4.9 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ՝ ԸՍՏ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

Դպրոցի գործունեության գերնպատակը սովորողների կրթության որակի բարձրացումն է, դրա համապատասխանությունը պետական և առարկայական չափորոշիչներին:

Պետք է ամենօրյա համալիր աշխատանք իրականացնել ուսման որակը և սովորողների առաջադիմությունը բարձրացնելու նպատակով: Դպրոցի մեթոդմիավորումները պետք է վերահսկեն ուսումնական պլանների կատարումը, դասի պլանների՝ կրթության պետական նոր չափորոշիչներին համապատասխանելը, դասավանդման որակը, տնային աշխատանքների ծավալը և արդյունավետությունը, կատարեն վերլուծություններ: Նախատեսում ենք

անցկացնել աշակերտներին դրվող օբյեկտիվ գնահատականների ստուգմանն ուղղված միջոցառումներ՝ համադպրոցական գրավոր աշխատանքներ, պարբերաբար անցկացվող գիտելիքի ստուգումներ, դասալսումներ՝ արդյունքները համեմատելով ընթացիկ գնահատականների հետ, քննարկել մեթոդմիավորումների նիստերում:

Պետք է մշտապես ուշադրության կենտրոնում պահել ուսուցիչների՝ գիտելիքների փոխանցման և գնահատման ձևերին ու մեթոդներին, յուրաքանչյուր երեխային ցուցաբերվող առանձնահատուկ մոտեցումներին, էլեկտրոնային մատյանների ճիշտ ժամանակին լրացմանը:

Կրթության որակի վերահսկման և սովորողների ուսումնառության որակի բարձրացման գործում կարևորում ենք համագործակցությունը ծնողական համայնքի հետ: Համոզված ենք, որ դպրոց-ուսուցիչ-աշակերտ–ծնող միասնությունը կարող է ապահովել անհրաժեշտ կրթական որակ և արդյունք:

4.10 ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ և ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակակից դպրոցն անհնար է պատկերացնել առանց ՏՀՏ կիրառության: Դրանց յուրաքանչյուր օր օգտագործում են թե՛ դպրոցի տնօրենությունը, թե՛ ուսուցիչները, թե՛ աշակերտները և նրանց ծնողները: Կիրառվում են էլեկտրոնային դասամատյաններ և օրագրեր, դպրոցում կիրառվող մատենագրությունը աստիճանաբար թղթայինից անցում է կատարում էլեկտրոնայինի:

Կրթական նոր տեխնոլոգիաների զարգացումն էլ ավելի է խթանում դասավանդմամ նոր մեթոդների, ուսուցման նոր ձևերի մշակումը:

Այսօր արդեն նորություն չեն դասավանդման փոխներգործուն, աշակերտակենտրոն մեթոդները, ուսուցման կազմակերպման տարբեր եղանակները, հեռավար ուսուցման ձևերը:

Դպրոցում այսպիսի նորարարական տեխնոլոգիաների կիրառումը պահանջում է ժամանակ և միջոցներ: Հնարավոր չէ մեկ սեմինարի կամ վերապատրաստման

դասընթացի միջոցով բոլոր ուսուցիչների մոտ ձևավորել ուսուցման ժամանակակից մեթոդների արդյունավետ կիրառման կարողություններ:

Ուսուցիչը պետք է ժամանակ ունենա նոր գիտելիքներ ստանալու, դրանք գործունելու, սխալներն ուղղելու և մոտեցումները վերանայելու համար:

Դպրոցի վարչական կազմն էլ պետք է կարողանա ուսուցչի աշխատանքը վերահսկել, անհրաժեշտ օժանդակություն ցույց տալ և ապահովել նոր ստացած գիտելիքների և հմտությունների կիրառումը:

Ցանկալի է, որ յուրաքանչյուր դպրոց, ըստ իր զարգացման ուղղվածության առաջնահերթությունների, ներդնի գիտականորեն հիմնված որևէ նոր, զարգացում ապահովող գիտամանկավարժական նորարարություն: Սա հնարավորություն կտա հիմնադրին գնահատելու դպրոցի ջանքերը գիտական տեսանկյունից՝ դրանով դպրոցը առանձնացնելով մյուս դպրոցներից, օգտագործելով, տարածելով հաջողված փորձի արդյունքները:

5. ԴՊՐՈՑԻ ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ՎՏԱՆԳՆԵՐԸ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.Աշխատակազմի գործունեություն	
Վարչական կազմ • ղեկավարման բազմամյա փորձ ունեցող, աշխատանքում հետևողական, արհեստավարժ վարչական անձնակազմ, ձևավորված թիմ • համագործակցային և թիմային աշխատանքի իրականացում	

• կառավարման ժողովրդավարական ոճ • կադրային ճիշտ քաղաքականություն • բարձր կարգապահություն և պատասխանատվություն • բոլոր օղակների աշխատանքի համակարգվածություն և վերահսկողություն • մանկավարժների բնականոն աշխատանքի կազմակերպման հստակ մեխանիզմ	

2.Մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմ	
• անհրաժեշտ որակավորում, աշխատանքային փորձ ունեցող և իրենց աշխատանքին նվիրված բարձրորակ մանկավարժ-մասնագետներ, ստեղծագործ ուսուցիչներ • բարձր պատասխանատվություն, • աշխատանքից բացակայությունների ցածր տոկոս • մարդկային բարձր որակներ, • համակազմի միջին տարիքային ցուցանիշի նվազում • աշակերտակենտրոն մոտեցում, • սովորողի հաջողության կարևորում և գնահատում,	• ուսուցչի հասարակական ցածր վարկանիշ • տարակարգեր ձեռք բերելու և «Լավագույն ուսուցիչ» մրցույթին մասնակցելու ցանկության բացակայություն • երիտասարդ, արհեստավարժ ուսուցիչների դպրոցում աշխատելու ցանկության նվազում • որոշ առարկաների ուսուցիչների կարիք, առանձին դեպքերում՝ իսպառ բացակայություն

• սպասարկող պատասխանատու անձնակազմ • աշխատանքի նկատմամբ դրական վերաբերմունք	• Նյութական կարիքի գործոնը՝ որպես մոտիվացնող հիմնախնդիր
3.Սովորողների ուսումնառություն և այլ գործունեություն	
• ուսման նկատմամբ դրական վերաբերմունք • հիմնավոր գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերում • ուսուցիչներին տրված բարձր գնահատական • անհարգելի բացակայությունների բացառում, դպրոցի նկատմամբ սեր և կապվածություն • Տաղանդավոր և սեփական վաստակի ձգտող երեխաների կտրուկ աճ • դպրոցի նկատմամբ սեր և կապվածություն • պատշաճ աշակերտական տեսք	• ֆիզկուլտուրայի և սպորտի նկատմամբ հետաքրքրության անկում • Կրթական միևնույն աստիճանի պայմաններում կրթվածության խիստ տարբեր մակարդակ • Կախվածություն հեռահաղորդակցման միջոցներից, որն առաջացնում է ուշադրության և լսելու հետ կապված խնդիրներ, ընկալելու, վերարտադրելու դժվարություն, ադեկվատության նվազում • Անառողջ սովորությունների աճ
4.Ծնողների, համայնքի, կառավարման խորդրդի, այլ մարմինների գործունեություն	

• օժանդակություն երեխաների կրթություն ստանալուն • ճանաչողական էքսկուրսիաների կազմակերպում • ծնողական խորհրդի համագործակցություն համայնքի տարբեր սոցիալական խմբերի հետ • կառավարման խորհրդի, խորհրդակցական մարմինների բարեխիղճ աշխատանք • ժողովրդավարական սկզբունքներով գործող ակտիվ աշակերտական խորհուրդ • մասնակցություն համայնքային միջոցառումներին	
5. Շենքային պայմաններ	
• Տեղակայման բարենպաստ դիրք • Հիմնանորոգված դպրոց • Սանիտարահիգիենիկ պայմանների ապահովում • Ժամանակակից գույքի և սարքավորումների առկայություն	
6. Հաղորդակցություն, համագործակցություն	
• համագործակցություն անչափահասների, մանկավարժահոգեբանական	• դպրոցի անհրաժեշտ հաստիքների պակաս

կառույցների հետ սովորողների դաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում • համագործակցային մթնոլորտի ձևավորում • սերտ համագործակցություն ծնողների հետ • ուսուցիչ-ծնող աշխատանքային հարաբերություններ • e-խմբեր՝ դասղեկ-ուսուցիչ-աշակերտ և դասղեկ-ծնող հաղորդակցության համար	
7. Բյուջե, ֆինանսական միջոցներ	
• դպրոցի բյուջեի արդյունավետ և նպատակային օգտագործում • ֆինանսական միջոցներով գրագետ աշխատանք՝ ըստ օրենսդրության • աշխատավարձի ժամանակին վճարում • փորձառու հաշվապահ • անհրաժեշտ նյութատեխնիկական բազա	• արտաբյուջետային միջոցների բացակայություն, • ծնողների կողմից ներդրումների բացակայություն
Հնարավորություններ	Վտանգներ
• մանկավարժական արդի փորձի յուրացում և տեղայնացում • կազմակերպված և նպատակաուղղված աշխատանքով	• կրթությանը հատկացվող նյութական միջոցների անբավարարություն • երկրում կրթության վարկի նվազում

բարձր արդյունքի հասնելու ցանկություն • համացանցային պաշարների համալրում • համագործակցություն սովորողների և նրանց ընտանիքների հետ նաև կապի ժամանակակից միջոցներով • նոր նախաձեռնություններ և դրանց իրագործման համար հնարավորությունների ստեղծում • լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացում • դրամաշնորհային ծրագրերի իրականացում • Ֆինանսական հնարավոր ձեռքբերումներ տարբեր նպատակային ծրագրերի միջոցով տարատեսակ նախագծեր իրականացնելու համար	• դպրոցի տարանջատում հիմնականի և ավագի • սովորողների անհարկի շփում սոցիալական ցանցերի միջոցով • ուսուցչի աշխատանքի ցածր վարկանիշ վարձատրություն • համացանցային տարբեր վտանգներ • հետպատերազմյան և համավարակի դժվարություններով պայմանավորված բարոյահոգեբանական խնդիրներ: Արտագաղթ

6. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դպրոցում հարկավոր է զարգացնել հանրակրթության կազմակերպման հետևյալ սկզբունքները.

- Հանրակրթությունը պետք է իրականացվի ազգայինի հենքի վրա՝ համամարդկային արժեքների ներդաշնակ զուգորդմամբ:

- Հանրակրթությունը պետք է նպաստի մարդու և քաղաքացու ձևավորմանը, ծառայի անհատին ու ժողովրդին:
- Հանրակրթությունը պետք է իրականացվի ՀՀ պաշտոնական լեզվով՝ գրական հայերենով: Այն նպատակաուղղված է հայոց լեզվի, հայ ժողովրդի մշակութային ժառանգության պահպանմանն ու զարգացմանը, ազգային ինքնության ու միասնության պահպանմանը:
- Հանրակրթությունն պետք է իրականացվի ուսուցման և դաստիարակության միասնականության սկզբունքով պահպանելով իր բնույթը, զերծ մնալով խտրականությունից ու սահմանափակումներից:
- Կրթություն ստանալը պետք է հավասարապես մատչելի լինի յուրաքանչյուրին անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:
- Հիմնական կրթությունը պետք է հասանելի յուրաքանչյուր անձի՝ անկախ նրա հետաքրքրություններից, մասնագիտական նախնական կողմնորոշումից, մտավոր և ֆիզիկական կարողություններից՝ սովորողների տարիքային առանձնահատկություններին և զարգացման մակարդակին համապատասխան:

7.ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

« Սովորական ուսուցիչը պատմում է:

Լավ ուսուցիչը բացատրում է:

Բարձրակարգ ուսուցիչը ցույց է տալիս:

Հանճարեղ ուսուցիչը ոգեշնչում է»:

Ուիլյամ Ուորդ

Լավ դպրոցը լավ ուսուցիչն է, չէ որ նա աշխատում է ամենապատասխանատու խնդրի վրա՝ նա ձևավորում է մարդուն՝ լինելով դպրոցում ամենակարևոր երևույթը, ամենաուսուցանող առարկան, ամանալավ կենդանի օրինակը:

Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման կարևորագույն օղակներից մեկը շարունակ ինքնակատարելագործման ձգտող և թիմային աշխատանքի պատրաստ ուսուցիչն է: Ուսուցչի բարդ և պատասխանատու ամենօրյա գործունեությունը արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է :

- պայմաններ ստեղծել մանկավարժական համակազմի մեթոդական պատրաստվածության կատարելագործման համար
- ուսուցիչների համար կազմակերպել որակյալ և գործուն մեթոդական, մանկավարժական օգնություն
- մանկավարժական առաջավոր փորձի փոխանակման համար կազմակերպել բաց դասեր, իրականացնել դասալսումներ և այլ միջոցառումներ
- աջակցել ատեստավորումից առաջ իրականացվող ուսուցիչների վերապատրաստմանը, իրականացնել վերապատրաստման որակի գնահատում
- զարգացնել ուսուցիչների ՏՀՏ գիտելիքները և հմտությունները
- ուսուցիչների մոտ զարգացնել յուրաքանչյուր սովորողի՝ սեփական մշակույթի, լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների և ազգային բարձր արժեքների կարևորության ու նշանակության, դրանց կրողը լինելու գիտակցության բարձրացնելու կարողությունները:
- ուսուցիչների մոտ զարգացնել սովորողների մոտ հայրենասիրություն, սեփական տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ ճանաչելու, մարդու իրավունքները հարգելու, աշխատասեր լինելու, սեփական ուժերն ու կարողությունները գնահատելու հմտություններ:

«Ուսուցիչների ամբողջ հպարտությունը աշակերտների մեջ է,

իրենց ցանած սերմերի աճի մեջ»:

Դմիտրի Մենդելեև

Կրթության բովանդակային բաղադրիչներն են.

- գիտելիքների համակարգ,
- կարողություններ և հմտություններ,
- արժեքային համակարգ:

Այսօր, երբ կրթական բարեփոխումների հիմնական պահանջներից մեկը դարձել է աշակերտակենտրոն ուսուցումը, անցում է կատարվել գիտելիքակենտրոն համակարգից ուսուցման եռակենտրոն համակարգի գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, արժեքային համակարգ, և խնդիր է դրվել սովորեցնելու սովորել, առաջնային պլան են մղվում այդ խնդիրների լուծմանն ուղղված մեթոդներն ու մեթոդական հնարները:

Այդ նպատակով անհրաժեշտ է սովորողին ծանոթացնել ճանաչողության մեթոդներին և ձևավորել դրանք գործնականում կիրառելու կարողություններ և հմտություններ:

Սովորողը պետք է գիտակցի սեփական մշակույթի, լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային և այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը, պահպանողը և հետագա սերունդներին փոխանցողը:

Սովորողների մոտ կարողություններ և հմտություններ զարգացնելիս հատուկ ուշադրություն դարձնել

- հաղորդակցության,

- համագործակցության,
- քննադատական մտածողության,
- մեդիագրագիտության,
- ինքնակառավարման,
- ստեղծագործական մտածողություն,
- հետազոտական, նախագծային աշատանք կատարելու հմտությունների վրա:

9.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ և ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԿԱՏԱՐՈՂՆԵՐՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

• Դպրոցի գործունեության նպատակը յուրաքանչյուր երեխայի, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքների ապահովումն է:

• Դպրոցի զարգացման հիմնական նպատակներն են՝

1. Կրթության բնագավառում պետական քաղաքականության իրականացում:
2. Աշակերտների կողմից հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացում:
3. Ուսումնական բարեկեցիկ, անվտանգ միջավայրի ապահովում:
4. Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնանյութական բազայի ապահովում:
5. ՏՀՏ-ի կիրառման միջոցով ուսուցման արդյունավետության բարձրացում:
6. Կրթության որակի բարձրացում:
7. Սովորողների ինտեգրում հասարակական կյանքին, արտադպրոցական աշխատանքներին, ազգային, մշակութային, հայրենասիրական արժեքների ձևավորում, ամրապնդում:

8. Ծնողների մասնակցության ապահովում սովորողների ուսուցման, դաստիարակության գործընթացին:
9. Խորհրդակցական մարմինների արդյունավետ գործունեություն:
10. Դպրոցի բարձր հեղինակության պահպանում :

- Դպրոցի զարգացման ծրագիրն ուղղված է առաջիկա հինգ տարում դպրոցի բնականոն և արդյունավետ գործունեության ապահովմանը:
- Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման և կառավարման արդյունավետությունը կախված է դպրոցի կարիքների գնահատումից, որոնք ոչ միայն կան, այլն առաջիկայում հայտնվելու են: Դպրոցի յուրաքանչյուր ոլորտում առկա խնդիրները վերլուծելիս նպատակահարմար է առկա տվայլները առանձնացնել ըստ նպատակների կարևորության: Յուրաքանչյուր նպատակից բխող խնդիրները պետք է ուղղված լինեն պլանավորված ժամանակահատվածում դրական արդյունքների ձեռքբերմանը, լինեն իրատեսական, դպրոցի պայմաններին համապատասխան:

Նպատակ 1.	Ժամանակ ացույց	Կատարողներ
Ուսումնական հարմար և անվտանգ միջավայրի ապահովում: Խնդիր՝ Դպրոցը դարձնել անվտանգ, բարեկեցիկ, ֆիզիկապես հասանելի յուրաքանչյուր սովորողի համար:	2023-2028	տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքների գծով, դպրոցի տնտեսական աշխատանքների գծով տեղակալներ, բուժքույր, ԴԱԿ, ուսուցիչներ
Դպրոցի տարբեր հարթակներում ապահովել սովորողների անվտանգությունը:	2023	տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքների գծով, դպրոցի տնտեսական աշխատանքների գծով տեղակալներ, բուժքույր, ԴԱԿ, ուսուցիչներ

Բուֆետում, սանհանգույցներում սանիտարահիգենիկ պայմանների ապահովում /մաքրություն, ախտահանում, դեռատիզիացիա/:	2023-2028	դպրոցի տնտեսական աշխատանքների գծով տեղակալ, բուժքույր
Դասասենյակների և առարկայական կաբինետների արդիականացում:	2023-2024	տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքների գծով, դպրոցի տնտեսական աշխատանքների գծով տեղակալներ
Դպրոցի բակի խնամում և կանաչապատում:	2023-2028	դպրոցի տնտեսական աշխատանքների գծով տեղակալ
Բուժկետին անհրաժեշտ պարագաների հավելում	2023-2028	դպրոցի տնտեսական աշխատանքների գծով տեղակալ, բուժքույր,
Արտակարգ իրավիճակների ծառայությունների հետ ակտիվ համագործակցություն:	2023-2028	տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ
Սովորողների և ուսուցիչների անվտանգ և արդյունավետ կենսագործունեության ապահովում, առողջության պահպանում:	2023-2028	տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքների գծով, դպրոցի տնտեսական աշխատանքների գծով տեղակալներ, բուժքույր, ԴԱԿ, ուսուցիչներ

Նպատակ 2.	Ժամանակացույց	Կատարողներ
Կրթական պահանջմունքները բավարարող ուսումնական միջավայրի ապահովում: Խնդիր՝ Դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացում:	2023-2028	տնօրեն, փոխտնօրեններ, զինղեկ, գրադարանավար, տնօրենի տնտեսական աշխատանքների գծով տեղակալ:

Դպրոցը համալրել էլեկտրոնային գրատախտակներով:	2023-2024	տնօրեն, տնօրենի տնտեսական աշխատանքների գծով տեղակալ
Բնագիտական առարկաների կաբինետները հարստացնել լաբորատոր սարքավորումներով:	2023-2024	տնօրեն, տնօրենի տնտեսական աշխատանքների գծով տեղակալ
Համագործակցել ՏՀՏ կիրառման փորձարություն ունեցող դպրոցների հետ:	2023	տնօրեն, փոխտնօրեններ:
Ստեղծել միջավայր և հնարավորություն լավագույն փորձի փոխանակման համար:	2023-2028	տնօրեն, փոխտնօրեններ,:
Արդիականացնել ռազմագիտության դասասենյակը:	2023-2024	տնօրեն, զինղեկ, տնօրենի տնտեսական աշխատանքների գծով տեղակալ:
Ստեղծել ուսումնական նյութերի և օժանդակ գրականության էլեկտրոնային գրադարան:	2023-2025	տնօրեն, փոխտնօրեններ, գրադարանավար:

Նպատակ 3.	ժամանակացույց	Կատարողներ
Սովորողների առավելագույն ընգրկվածություն արտադպրոցական, արտադասարական վարչական շրջանի և քաղաքային միջոցառումներին: Խնդիր՝Խթանել ուսուցչական անձնակազմի, ծնողական համայնքների համագործակցությանը:	2023-2028	տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ԴԱԿ:
Շարունակաբար կազմակերպել մշակութային, գրական, բնապահպանական, պատմահայրենասիրական միջոցառմներ, վիկտորինաներ, աշակերտական կոնֆերանսներ, բանավեճի կլոր սեղաններ,	2023-2028	տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ԴԱԿ:

խրախուսել կազմակերպիչներին և մանկավարժներին:		
Ստեղծել աշակերտի անկյուն՝ հանգստի պայմաններով:	2023-2025	տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ:
Ինտեգրել սովորողներին հասարակական կյանքում , նրանց մոտ ազգային և մշակութային արժեքների ձևավորել:	2023-2028	տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ԴԱԿ:
Բացահայտել շնորհալի սովորողներին, կազմակերպել ցերեկույթներ, միջոցառումներ, հայրենասիրության դասեր:	2023-2028	տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ԴԱԿ:

Նպատակ 4.	ժամանակացույց	Կատարողներ
Դպրոցում իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավում: Խնդիր՝ 1.Սովորողների ուսուցման ն դաստիարակության արդյունավետ մեխանիզմների մշակում: 2.Ներդպրոցական վերահսկողության կազմակերպում, աշխատանքային կարգապահության ապահովում, համագործակցային փոխհարաբերությունների ամրապնդում:	2023-2028	տնօրեն, տնօրենի տեղակալներ
1.Ապահովել արտակարգ ընդունակություններ դրսևորած աշակերտների մասնակցությունը օլիմպիադաներին, մրցույթներին, միջոցոռումներին:	2023-2028	տնօրեն, տնօրենի տեղակալներ

2.Ներդնել աշակերտների ստեղծագործական, հետազոտական, նորարարական աշխատանքների խրախուսման մեխանիզմներ պատվոգրեր, պարգևներ, խրախուսման այլ ձևեր:	2023-2024	տնօրեն, տնօրենի տեղակալներ
3.Զարգացնել ուսուցիչների դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառման կարողություններն ու հմտությունները:	2023-2025	տնօրեն, տնօրենի տեղակալներ
4. Ներդնել ներդպրոցական վերահսկողության մեխանիզնմներ, ապահովել աշխատանքային կարգապահության, համագործակցային աշխատանքի սկզբուներ և հաշվետվողականության մեխանիզմ:	2023	տնօրեն, տնօրենի տեղակալներ

Նպատակ 5.	ժամանակացույց	Կատարողներ
Կրթության որակի բարձրացում: Խնդիր՝ Կրթության մատչելիության ապահովում, սովորողների կարողություններին և ձգտումներին համապատասխան կրթական չափոշիչների յուրացում, որակյալ կրթության ապահովում:	2023-2028	տնօրեն, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորման նախագահներ:
1.Ներդնել սովորողների գործնական և ինքնուրույն աշխատանքի հմտությունների զարգացմանն ուղղված ուսուցման ժամանակակից մեթոդներ:	2023-2024	տնօրեն, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորման նախագահներ:
2.Ուսուցման գործընթացում կիրառել տեղեկատվական և հաղորդակցության ժամանակակից տեխնոլոգիաներ:	2023-2028	տնօրեն, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորման նախագահներ:

3.Ակտիվացնել տարրական և միջին դպրոցի ուսուցիչների համագործակցությունը:	2023-2025	տնօրեն, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորման նախագահներ:
4.Ապահովել ուսումնական պլանի համապատասխանեցումը սովորողների պահանջներին:	2023-2028	տնօրեն, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորման նախագահներ:
5. Կատարել սովորողների ուսումնառության արդյունքների շարունակական վերլուծություն:	2023-2028	տնօրեն, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորման նախագահներ:
6. Շարունակաբար կիրառել սովորողների գիտելիքների որակական գնահատում:	2023-2028	տնօրեն, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորման նախագահներ:

Նպատակ 6.	ժամանակացույց	Կատարողներ
Խորհրդակցական մարմինների արդյունավետ համագործակցություն: Խնդիր՝ Թափանցիկության և հաշվետվության ապահովում:	2023-2028	տնօրեն, դպրոցի խորհրդակցական մարմինների նախագահներ, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ԴԱԿ
1.Ծնողական ընդհանուր, դասարանական ժողովների ընթացքում ներկայացնել անհրաժեշտ տեղեկություններ դպրոցի ոսումնադաստիարակչական գործունեության վերաբերյալ:	2023-2028	տնօրեն, դպրոցի խորհրդակցական մարմինների նախագահներ, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ԴԱԿ

2.Դպրոցի նկատմամբ վստահությունը գնահատելու համար պարբերաբար անցկացնել հարցումներ մանկավարժների, աշակերտների, ծնողների շրջանում և իրականացնել ներքին վերլուծություն:	2023-2028	տնօրեն, դպրոցի խորհրդակցական մարմինների նախագահներ, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ԴԱԿ
3.Ներդնել ծնողներին սովորողների կրթության և դաստիարակության գործընթացին մասնակից դարձնելու գործընթաց:	2023-2024	տնօրեն, դպրոցի խորհրդակցական մարմինների նախագահներ, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ԴԱԿ
4.Ներդնել ապահովել առողջ համագործակցային աշխատանքային հարաբերությունները խթանող գործընթաց աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-աշակերտ, ծնող-ուսուցիչ օղակներում:	2023-2025	տնօրեն, դպրոցի խորհրդակցական մարմինների նախագահներ, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ԴԱԿ
5. Ապահովել դպրոցի մեթոդական միավորումների համագործակցությունը, ինչպես նաև այլ դպրոցների մեթոդմիավորումների հետ	2023-2025	տնօրեն, դպրոցի խորհրդակցական մարմինների նախագահներ

Նպատակ 7.	ժամանակացույց	Կատարողներ
Մանկավարժական համակազմի մասնագիտական որակավորման բարելավում, կատարելագործում: Խնդիր՝ 1.Մանկավարժների պատրաստվածության և ինքնագնահատականի բարձրացում, ժամանակակից դասավանդման մեթոդների տիրապետում և կիրառում:	2023-2028	տնօրեն, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ

2.Ուսուցիչների մասնագիտական առաջխաղացման հնարավորությունների ընդլայնում:		
1.Համադրել ավանդական և արդիական դարձած ուսուցման մեթոդները և նպաստել որակյալ ուսուցման ապահովմանը	2023-2028	տնօրեն, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ
2.Մանկավարժական առաջավոր փորձի յուրացման նպատակով իրականացնել համապատասխան աշխատանքներ (դասալսումներ, սեմինարներ և այլ):	2023-2028	տնօրեն, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ
3.Կազմակերպել ուսուցիչների մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ունակութունների կատարելագործմանը նպաստող միջոցառումներ:	2023-2028	տնօրեն, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ
4.Ուսուցիչների ատեստավորման մասնակցության ապահովում:	2023-2028	տնօրեն, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ
5. Ուսուցիչների վերապատրաստման արդյունքում սովորածի գնահատում:	2023-2028	տնօրեն, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ

10. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

<<Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի համաձայն դպրոցի զարգացման ծրագրի կատարման վերահսկումը դպրոցի խորհրդի օրենսդրական պարտականությունն է: Արդյունքների գնահատումը պլանավորվում է կատարել այսպես.

- ✓ ծրագրի պարբերաբար վերանայում և համապատասխան փոփոխությունների ներկայացում կառավարման խորհրդին հավանություն ստանալու,
- ✓ զարգացման ծրագրի հիման վրա միջնաժամկետ (մեկ տարվա համար նախատեսված) աշխատանքային պլանի կազմում,
- ✓ ծրագրի իրականացման ուղղությամբ կատարված աշխատանքների վերլուծություն, վերլուծության արդյունքում միջոցառումների վերանայում, այդ ուղղությամբ մանկավարժական խորհրդի առաջարկությունների քննարկում,
- ✓ մշակված միջոցառումների փոփոխություն և հարստացում,
- ✓ ներդպրոցական գնահատման վերահսկողության իրականացում,
- ✓ ուսուցիչների, ծնողների, աշակերտների հարցումներ,
- ✓ ցուցանիշների համեմատություն, հաշվետվությունների կազմում,
- ✓ հաշվետվությունների հասանելիություն շահառու մարմիններին (պետական լիազորված մարմիններ, դպրոցի աշխատակազմ, ծնողներ, աշակերտներ, համայնք և այլն),
- ✓ ընթացիկ աշխատանքների և արդյունքների վերաբերյալ բովանդակային տեղեկատվություն դպրոցի կայքի հայտարարությունների բաժնում,

- ✓ ծրագրի իրականացման տարեկան ամփոփում և արդյունքների ներկայացում դպրոցի կառավարման և մանկավարժական խորհուրդներին:

11.ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԸ և ԴՐԱՆՑ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ✓ Դպրոցի ֆինանսական սահմանափակ հնարավորություններ
- ✓ Արտագաղթ , որը կբերի ֆինանսավորման կրճատման
- ✓ Ուսուցիչների ստեղծագործական նորարարական գործունեությունը խթանող խրախուսման միջոցների պակաս
- ✓ Հետպատերազմյան և համավարակի դժվարություններով պայմանավորված բարոյահոգեբանական մթնոլորտ

<u>Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները</u>

- ✓ Սովորողների թվաքանակի ավելացում
- ✓ Եկամուտներին համապատասխան ծախսերի ճիշտ պլանավորում
- ✓ Ֆինանսատնտեսական միջոցների իրատեսական նախահաշվի կազմում
- ✓ Արտաբյուջետային մուտքեր հետևյալ աղբյուրներից
    1. նպատակային կրթական ծրագրերի միջոցով
    2. Լրացուցիչ ձեռնարկատիրական գործունեության միջոցով
- ✓ Դասարանների պահանջվող խտության ապահովում
- ✓ Ուսուցիչների ուսումնական ծանրաբեռնվածության ապահովում
- ✓ Դպրոցի գործունեության թափանցիկություն

13. Ակնկալվող արդյունքները

Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ստանալ հետևյալ արդյունքները՝

- ✓ ուսումնական գործունեության համար պատշաճ միջավայր
- ✓ ուսումանյութական բազայի արդիականացում և հարստացում
- ✓ ուսուցիչների ինքնակրթության մոտիվացիայի աճ
- ✓ ուսուցման որակի աճ
- ✓ աշակերտ-ուսուցիչ, աշակերտ- ծնող, ծնող-ուսուցիչ, աշակերտ-համայնք, փոխհարաբերությունների բարձրացում
- ✓ Դպրոցի և ուսուցչի հեղինակության բարձրացում
- ✓ ՏՀՏ կիրառության ընդլայնում
- ✓ Դպրոցի՝ որպես նորարարությունների ակտիվ ներդրման և համայնքի կրթամշակույթային կենտրոնի դերի աճ
- ✓ դպրոցի առաքելությանը և ուղղվածությանը համապատասխան շրջանավարտներ

«Կրթությունը ամենահզոր զենքն է, որը դու կարող ես օգտագործել աշխարհը փոխելու համար»:

Նելսոն Մանդելա

Որպես հայ մարդ և մանկավարժ՝ մեծագույն ցանկությունս է, որ դպրոցն արժանի լինի իր կոչմանը, ուսուցիչը՝ գնահատված իր վաստակով, շրջանավարտը՝ բազմակողմանի զարգացած, մրցունակ անհատ, հասուն քաղաքացի, բարձր արժեքների կրող, ով պատրաստ է ազնվորեն ծառայելու իր հայրենիքին և լինել նրա զարգացման և հզորացման երաշխավորը:

Տնօրենի պաշտոնի հավակնորդ՝

Հայկանուշ Անդրանիկի Մարգարյան